

ղէմ, յուխտ եւ երկրպագութիւն Քրիստոսի Տնօրինական Ս. Տեղեաց: Հայոց Անաստաս վրդ.ը միայն, ինչպէս յիշած ենք այլուր, գրի առած է Յուլյակ մը Երուսաղէմի Հայ Վանօրէից մասին: Ան թէեւ զերծ չէ քննադատութենէ և ձեռնմխութիւններէ, ինչ որ ալ ըլլայ սակայն, այդ Յուլյակը հայեցի կարևոր յիշատակարան մըն է, որուն համաձայն, Զիթենեաց լերան վըրայ, բաւական թուով վանքեր կը յիշուին. բայց ցաւալի է ըսել որ նոյն յիշուած վանքերը, գոնէ առ այժմ, չէ կարելի վաւերագրիներով ձգել, միայն անոնցմէ երեքը, ըստ կարելւոյն, պիտի կրնանք նկարագրել հնախօսութեան և պատմութեան հայթայթած տուիքներու համաձայն: Այդ երեք վանքերն են. 1. Ս. Յովնանեւ Կարապետի վանքը. 2. Մժարվանքը. 3. Կանանց յատուկ Ս. Աւետիսի վանքը:

Ս. Յովնանեւ Կարապետի վանքը.

Երբ Դ. դարուն Աշտիկերտարանի եւ Բլրի երկու մայր եկեղեցիները սկսան շինուիլ, բարերար իշխաններու և մեծահաւատ տիկիններու օժանդակութեամբ, եւ Զիթենեաց լերան միայնակեացներու ջերմեռանդութեամբը, նոյն եկեղեցեաց շուրջը շինուածն մասնաւոր վանքեր և եկեղեցիներ. այդ մասին անհերքելի ապացոյցներ են հնախօսական ա՛յն թանկարժէք բեկորները՝ որ երևան եկած են վերջին տարիներու պեղումներէն: Հայք՝ Բլրի եկեղեցւոյն արևելեան կողմը, ունեցած են վանք մը Ս. Յովնանեւ Կարապետի անուամբ: Անաստաս վրդ.ի Յուլյակին մէջ, հետեեալ կերպով կը յիշուի ան. «Պանսայ վանքն, որ սուրբ Կարապետի եւ, որ յարեւելից կողմանէ Զիթենեաց լերինն կայ, նոյնպէս արժուի ծախիս շինեայ, յսնուն սուրբ Կարողիկիին որ ի Վաղարշապատ քաղաքի, զոր Աղուանք ունին միևչեւ ցայժմ»: Մովսէս Կաղանկատուացին ալ կը յիշէ այսպէս. «Պանկայ վանքն, որ յարեւելից կողմանէ Զիթենեաց լերինն կայ Պանոն ունն ձգեաւոր յԱղուանից եղեայ նախաշինող, եւ այժմ Պետրոս Աղուան քահանայ ունի» (Պատմութիւն Աղուանից Աշխարհի, էջ 227):

Նկատի առնելով այս երկու յիշատակարանները, համոզում կը գոյադնենք թէ Զիթենեաց լերան այս վանքին Աղուանք նախապէս տիրացած էին, յանուն իրենց Տ. Պանոյ կաթողիկոսին: